

ՀՅՈՒՄԱՆԻՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԸՈՒԵՋԻ ԸՆԴՈՒՄԵԼՈՒԹՅԱՆ
<<ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆՆԱԿԱՆ ՏՈՍՍԻ ՕՐԻՆԱԿ

Հիմնական ընդհանուր կրթության հիմքով դիմորդների համար (9-րդ դասարան)

1. Որտեղ են գտնվում մարդու քրտնագեղձերը և ճարպագեղձերը.
 1. ենթամաշկային բջջանքում
 2. բուն մաշկում
 3. մաշկի եղջերացող շերտում
 4. մելանին սիլթեզող բջիջների շերտում
2. Մարդու որ գեղձը չունի ծորան.
 1. ճարպագեղձ
 2. վահանաձև գեղձ
 3. ենթաստամոքսային գեղձ
 4. քրտնագեղձ
3. Ինչով են միանում մարդու ուղեղիկի կիսագնդերը.
 1. կամուրջով
 2. հիմային հանգույցով
 3. որդանման սպիտակ նյութով
 4. կենաց ծառով
4. Մարդու ողնուղեղի որ մասով է իրականանում նրա հաղորդող գործառույթը.
 1. սպիտակ նյութ
 2. գորշ նյութ
 3. արմատիկներ
 4. ողնուղեղային խողովակ
5. Որն է մարդու կենտրոնական նյարդային համակարգի բարձրագույն բաժինը.
 1. ողնուղեղ
 2. ուղեղաբունը
 3. միջանկյալ ուղեղ
 4. ծայրային ուղեղի կեղևը
6. Որտեղ է առաջանում ածխաթթու գազը.

1. հյուսվածքային հեղուկում
 2. թոքաբշտերում
 3. բջիջներում
 4. պլազմայում արտաշնչման ժամանակ
7. Մարդու որ բջիջներն են արտադրում ադրենալինը.
1. մակերիկամների կեղևային շերտի
 2. մակերիկամների միջուկային շերտի
 3. ենթաստամոքսային գեղձի
 4. մակուղեղի
8. Ինչ հիվանդություն է առաջանում մարդու վահանաձև գեղձի գերգործառույթի հետևանքով.
1. գաճաճություն
 2. լորձայտուց
 3. բազեդովյան հիվանդություն
 4. ճարպակալում
9. Որտեղ են քայքայվում մարդու էրիթրոցիտները.
1. փայծաղում և կարմիր ոսկրածուծում
 2. լյարդում և ուրցագեղձում
 3. լյարդում և փայծաղում
 4. փայծաղում և ավշային հանգույցներում
10. Ինչն է նպաստում արյան դանդաղ մակարդմանը.
1. ցածր ջերմաստիճանը
 2. K վիտամինի առկայությունը
 3. Ca իոնների մեծ խտությունը
 4. հեպարինի բացակայությունը
11. Որ երակով է հոսում զարկերակային արյունը մարդու օրգանիզմում.
1. ստորին սիներակով
 2. թոքային երակով

3. վերին սիներակով

4. լյարդի դռներակով

12. Որտեղ են տեղակայված մարդու սրտի փեղկավոր փականները.

1. ձախ փորոքի և աորտայի միջև

2. աջ փորոքի և թոքային զարկերակի միջև

3. նախասարտերի և փորոքների միջև

4. նախասարտերի միջև

13. Որտեղից է մարդու արյունը լցվում աորտա.

1. թոքային զարկերակից

2. աջ նախասարտից

3. աջ փորոքից

4. ձախ փորոքից

14. Ուր է անցնում օդը անմիջապես քթի խոռոչից մարդու ներշնչման ժամանակ.

1. կոկորդ

2. շնչափող

3. բրոնխներ

4. քթմպան

15. Ինչ նյութով է ծածկված ատամի պսակն արտաքինից.

1. էմալով

2. ցեմենտով

3. կակղանով

4. դենտինով

16. Ինչ ռեակցիա ունի մարդու թուքը.

1. ուժեղ թթվային

2. թույլ թթվային

3. ուժեղ հիմնային

4. թույլ հիմնային

17. Մարդու օրգանիզմում թվարկված օրգաններից որում չկան

մարտողական գեղձեր .

1.բերանի խոռոչում

2.կերակրափողում

3.ստամոքսում

4.բարակ աղիքում

18.Ինչ գործընթացներ են տեղի ունենում մարդու բարակ աղիում

մարսողության ըթացքում .

1.խոռոչային մարսողություն և սպիտակուցների ուռչում

2.սննդի մեխանիկական մանրացում

3.խոռոչային և առպատային մարսողություն և ներծծում

4.սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի սինթեզ և ներծծում

19.Որտեղ է բացվում մարդու ենթաստամոքսային գեղձի արտատար ծորանը.

1.ստամոքսի մեջ

2.տասներկու մատնյա աղու մեջ

3.հաստ աղու մեջ

4.ուղիղ աղու մեջ

20.Ինչ է ավիտամինոզը.

1.A վիտամինի անբավարարություն

2.A վիտամինի հավելյալ քանակ

3.ցանկացած վիտամինի հավելյալ քանակ

4.ցանկացած վիտամինի բացակայություն

21.Որ օրգանն արտազատական համակարգի օրգան չէ.

1.միզուկը

2.միզապարկը

3.մակերիկամը

4.երիկամը

22.Որտեղ են գտնվում մարդու մաշկի ընկալիչները.

1.վերնամաշկում

2.բուն մաշկում

3.միայն ենթամաշկային բջջանքում

4. ենթամաշկային բջջանքում և բուն մաշկում

23. Զանի ողերից է բաղկացած մարդու ողնաշարի կրծքային բաժինը.

1. 7

2. 5

3. 12

4. 15

24. Որն է աչքի օժանդակ հարմարանք.

1. արցունքագեղձը

2. բիրը

3. անոթաթաղանթը

4. եղջերաթաղանթը

25. Ինչ է մարդու աչքի բիրը.

1. ակնագնդի չորրորդ թաղանթ

2. ծիածանաթաղանթի կենտրոնում գտնվող անցք

3. կույր բծի մի մաս

4. եղջերաթաղանթի կենտրոնում գտնվող անցք

26. Որ մկաններն են կծկվում ոչ կամային.

1. միայն միջաձիգ զուավոր մկանները

2. հարթ և միջաձիգ զուավոր մկանները

3. հարթ մկանները և սրտամնանը

4. միջաձիգ զուավոր մկանը և սրտամնանը

27. Ինչ հիվանդություն է զարգանում մրդու օրգանիզմում թիրօքսինի

անբավարարության դեպքում.

1. զանաճություն

2. գիզանտիզմ

3. թզուկություն

4. բազեդովյան

28. Սովորաբար ինչ չի պարունակում երկրորդային մեզը.

1. միզանյութ

2. սպիտակուց

3.միգրացիա

4.չուր

29.Որն է բուսական բջջապատի հիմնական բաղադրամասը.

1.թաղանթանյութը

2.ֆոսֆոլիպիդը

3.նուկլեոտիդը

4.սպիտակուցը

30. Միտոքոնդրիումների ներքին թաղանթները ձևավորում են.

1.նիստեր/գրաններ/

2.վակուոլներ

3.կատարներ/կրիստաներ/

4.ինչպես կատարներ, այնպես էլ գրաններ

31. Ինչ է պարունակում կորիզակը.

1.ածխաջրեր և ԴՆԹ

2.ԴՆԹ և սպիտակուցներ

3.ճարպեր և ՌՆԹ

4.ՌՆԹ և սպիտակուց

32. Որ նյութն է վիրուսից բակտերիա անցնում, երբ վիրուսը վարակում է բակտերիային.

1.նուկլեինաթթուն

2.սպիտակուցը

3.լիպիդը

4.ածխաջուրը

33.Սպիտակուցի մոլեկուլի որ կառուցվածքն է պայմանավորում նրա բոլոր առանձնահատկությունները.

1.առաջնային

2.երկրորդային

3.երրորդային

4.սպիտակուցների մի մասի համար՝ երրորդային, մյուսների համար՝ չորրորդային

34.Որն է օսլայի մոնոմերը.

1.գլյուկոզը

2.գալակտոզը

3.ֆրուկտոզը

4.ռիբոզը

35. Հատիկավոր էնդոպլազմային ցանցի թաղանթների վրա են գտնվում.

1.Գոլջիի ապարատը և բջջային կենտրոնը

2.ռիբոսոմները

3.լիզոսոմները

4.միտոքոնդրիումները

36. Կենդանական բջիջները սովորաբար չեն պարունակում.

1.միտոքոնդրիումներ

2.քլորոպլաստներ

3.քրոմոսոմներ

4.ռիբոսոմներ

37. Վիրուսները կարող են ապրել և բազմանալ.

1.Միայն կենդանիների և բույսերի բջիջներից դուրս

2.միայն այլ օրգանիզմների բջիջներում

3.ինչպես այլ օրգանիզմների ներսում, այնպես էլ նրանցից դուրս

4.միայն կենդանիների և բույսերի բջիջներում

38. Ֆերմենտները տարբերվում են մնացած սպիտակուցներից, քանի որ՝

1.սինթեզվում են ռիբոսոմներում

2.կազմված են ամինաթթուներից

3.կենսաքիմիական ռեակցիաների կատալիզատորներ են

4.ունեն չորրորդային տարածական կառուցվածք

38. Կենդանի բջիջներում հանդիպող ամենախոշոր մոլեկուլները՝

1.սպիտակուցներն են

2.ՌՆԹ-ներն են

3.ԴՆԹ-ներն են

4.թաղանթանյութն է

39. Նուկլեինաթթուների մոնոմեր են՝

1.ամինաթթուները

2.նուկլեոտիդները

3.ազոտական հիմքերը

4.ֆոսֆորական թթվի մնացորդները

40.Որ գործընթացներն են տեղի ունենում ողորկ էնդոպլազմային ցանցի թաղանթների վրա.

1.սպիտակուցների և վիտամինների սինթեզ

2.լիպիդների և ածխաջրերի սինթեզ

3.սպիտակուցների և լիպիդների սինթեզ

4.սպիտակուցների և ածխաջրերի սինթեզ

41. Երբ է տեղի ունենում դուստր քրոմոսոմների տարամիտում դեպի բջջի բևեռներ միտոզի ժամանակ.

1.մետաֆազի ընթացքում

2.պրոֆազի ընթացքում

3.անաֆազի ընթացքում

4.թելոֆազի ընթացքում

42.Ինչ է առաջանում մեկ մայրական բջջից միտոզի արդյունքում.

1.մեկ դուստր բջիջ

2.երկու դուստր բջիջներ

3.երեք դուստր բջիջներ

4.չորս դուստր բջիջներ

43.Ինչ է տեղի ունենում միտոզի պրոֆազում.

1.քրոմոսոմներն ապապարուրվում են և հաստանում

2.քրոմոսոմները պարուրվում, կարճանում և հաստանում են

3.քրոմոսոմները բարակում և երկարում են

4.քրոմոսոմներն անհետանում են

44. Ինչպես են կիսվում սեռական բջիջները բազմացման գոտում.

1.միայն միտոզով

2.միայն մեյոզով

3.և միտոզով, և մեյոզով

4.սկզբում մեյոզով, այնուհետև՝ միտոզով

45. Ինչ են հաշվի առնում միահիբրիդային խաչասերման ժամանակ.

- 1.երկու գույգ հակադիր հատկանիշներ
- 2.մեկ գույգ հակադիր հատկանիշներ
- 3.չորս գույգ հակադիր հատկանիշներ
- 4.երկու ոչ հակադիր հատկանիշներ

46. Ինչ արդյունք է ստացվում հետերոզիգոտ առանձնյակների միահիբրիդ խաչասերման՝ ալելների միջև լրիվ դոմինանտության դեպքում.

1. ըստ գենոտիպի՝ 3:1 ճեղքավորում
2. ըստ ֆենոտիպի՝ 3: ճեղքավորում
3. ըստ ֆենոտիպի՝ 1:2:1 ճեղքավորում
4. ըստ գենոտիպի 1:1 ճեղքավորում

47. Ինչ է իրենից ներկայացնում օրգանիզմի արտաքին և ներքին հատկանիշների ամբողջությունը.

- 1.գենոտիպ
- 2.ֆենոտիպ
- 3.գենոֆոնդ
- 4.ռեակցիայի նորմա

48. Ինչ են մուտացիաները.

- 1.Ոչ ժառանգական օգտակար փոփոխություններ
- 2.տվյալ արտաքին պայմանների նկատմամբ բարենպաստ փոփոխություններ
- 3.օրգանիզմի համար անհրաժեշտ ոչ ժառանգական փոփոխություններ
- 4.ավելի հաճախ ոչ օգտակար ժառանգական փոփոխություններ

49. Որ մուտացիաներն են առավել տարածված.

- 1.գենային
- 2.քրոմոսոմային
- 3.ցիտոպլազմային
- 4.սոմատիկ

50.Ինչ է ռեակցիայի նորման.

- 1.տարվա ընթացքում ջերմաստիճանի փոփոխության սահմանները
- 2.տվյալ գենի որոշակի հատվածի փոփոխության չափը

3. հատկանիշի մուտացիոն փոփոխականության սահմանները

4. հատկանիշի մոդիֆիկացիոն փոփոխականության սահմանները

Յուրաքանչյուր թեստի ճիշտ պատասխանը 0.4 միավոր

Ընդամենը 20 միավոր